

ԳՈՂՏՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ



որսն «իրազեկ աղբյուրն մը քաղուած տեղեկութիւններ»-ու շարքին կկարդամ նաև «ինչ որ ամենն անդարմանելին է, սակայն, կոռւած թանկարժեք ձեռագիրներն ու գրքերն են, որոնք վաճառքի հանված են... Եգիպտոսի և Ամերիկայի մէջ: Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի և բանասեր Հ. Քյուրտյանի համաձայն, Հյուս. Ամերիկայի մէջ տեսնված են Ղալաթիո մատենադարանին պատկանող ամենաթանկագին հատորներ»: («Հայրենիք» օրաթիւ, դեկտ. 28 1945 թ.):

Քանի որ այս մասին ամենն առաջ «Պայքար»-ի հյուրընկալ էջերուն մէջ հարեանցի գրեցի, այժմ հարմար կդատեմ ավելի ծանրանալու:

Հետաքրքրական է, որ «Պայքար»-ի մէջ երկու մասն բաղկացալ այդ գրութիւնս արձագանք գտեր է շատ կողմեր: Փարիզին նամակով մը կշեռավեր «մեջտեղ» հանելու և Պոլսո գողութեան նման հայ ձեռագրաց դեմ կատարված ուրիշ ոճիրներ ալ մերկացնելու անհրաժեշտութիւնը:

Սակայն խնդիրն ունի իր բարդ կողմերը: Նախ որքան որ մեր հաստատութիւնները դիտեմ, իզուր պիտի ըլլան անպաշտոն և առօրյա հանգամանքով այս հետապնդումներն ու մերկացումները:

Վերոհիշյալ աղբյուրն կտեղեկանանք, թե «Արսլանյան Արք. (Պոլսո Պատրիարքական տեղակալը) դեպի էջմիածին իր վերջին ուղևորութեան, հոգեւոյս Նարոյանի վերաբերած է բոլոր այս մուկ գործերը»:

Էջմիածինն ունէ ձայն չելով տասնյակ հազար տղարներ արժող այս ձեռագրաց գողցվելուն և վաճառվելուն մասին*): Ատիկա կակնկալուեր գտնե, քանի որ Գարեգին Սրբազան Հովսեփյան, Կիլիկիո Տան նորըն-

տիր կաթողիկոսը, որ էջմիածնա ընտրութեան առթիւ հոն կգտնվեր, լավ ծանոթ էր այդ ձեռագրաց նախապես Ղալաթիո մատենադարանիս պատկանելուն և ազգային սեփականութիւն ըլլալուն: Մինչ ինքը անակնկալորեն անոնց կհանդիպեր Հյուս. Ամերիկայի մէջ օտար հաստատութեանց մօտ և հայ հնավաճառներ ծախուած կամ դեռ անոնց սեփականութիւն:

Պոլսո ազգային մատենադարանն գողցված ձեռագիրներուն առաջինը այդ մատենադարանի նախկին թիվ 68 ավետչարանն է, Կիլիկիա գրված 1253-ին: Գարեգին Սրբազան Հովսեփյան կվկայե, որ ինք Ղալաթիո մատենադարանը տեսած է այդ ձեռագիրը վերջին անգամ 1914-ին: Երկրորդ ձեռագիր մը, 1200-ին Ավագ վանք Վարդան գրիչն (Երզնկա) գրված, նույնպէս կպատկաներ Ղալաթիո ազգային մատենադարանին, նույնպէս Սրբազանն հոն տեսնուած 1914-ին:

Այդ ձեռագիրները 1929-ին ես տեսա Ադեքսանդրիո (Եգիպտոս) մէջ, Պոլսն հոն եկած հույն հնավաճառի մը մօտ, որ գլխավորաբար հախճապակիի (Կուտիմայի և այլ) առևտուր կընէր: Գինը, որ ինձմէ ուզեց այդ ձեռագիրներուն արժեքին համար, բարձր չէր, սակայն այն ատեն իմ գրպանիս համար պատկանելի գումար մըն էր, որով բնական է չկրցա գնել:

Այդ ձեռագիրները հետո անցեր են Նյու-Յորք հնավաճառ Հ. Գևորգյանի ձեռքը և առաջարկուեր են Ուաշինկթոնի Ֆրիւր Արդ Կալըրիին: Հոս է որ Գարեգին Սրբազան Հովսեփյան Հյուս. Ամերիկայի իր առաջնորդական օրերուն վերստին անոնց հանդիպեր է: Ֆրիւր Կալըրին ապա չէ գնել այդ ձեռագիրները և ատենք դարձալ եղել են սեփականութիւն Գևորգյանի ի Նյու-Յորք:

Արդ որոշ է, որ այս երկու ձեռագիրները անհետացեր են Ղալաթիո մատենադարանն 1914—1929-ի միջև ատեն մը: 1914-ին Գարեգին Սրբազանը Ղալաթիո Ազգ. մատենադարանին մէջ է տեսեր: 1929 ես ա-

*) Ձեռագրերի գողացման և վաճառման մասին էջմիածինը մինչև այժմ ոչ ոքից, ոչ գրավոր և ոչ էլ բանավոր, տեղեկութիւններ չի ստացել: Մանք. ԽԱՐԵԱՆ:

տոնք կտեսնենի Աղեքսանդրի մեջ հույն հնավաճառի մը մոտ:

Ո՛վ, ի՞նչպես և ե՞րբ ատոնք գողցեր է բուն մատենադարանին, ինծի կմնա անծանոթ: Արսլանյան Սրբազան «Նարոյանի վերագրած է» ատոնց կորուստը, հավանաբար ըսել ուզելով, որ անոր «ժամանակ» գողցուած ըլլալու են:

Ասիկա եթե ճիշտ է, դուրին ամբաստանութիւն մըն է մինչև ապացուցներ մեջ տեղ հանուիլը: Իսկ եթե ճիշտ չէ, այն ատեն շատ ալպանելի բան մըն է:

Ամեն պարագայի տակ Արսլանյան արքեպիսկոպոս 1944-ին մեռած Նարոյան Սրբրազանի պատրիարքական իշխանութիւնը իբր տեղապահ ձեռք առնելէն վերջ, պետք էր զննել, թե ի՞նչ ազգային հարստութիւն իրեն խնամքին կհանձնվեր: Կերևա թե ինք անտարբեր գտնված է, քանի որ գրեթե տարի ու կես վերջ դեռ այդ գողցուած ձեռագիրներուն մասին ոչինչ կհրապարակեր: Միայն «Պայքար»-ի մէջ իմ հրատարակութենէն վերջն էր, որ եղած աղմուկին վրա, ատոնց գողցուած, ըլլալուն հանցանքն ու պատասխանատվութիւնը իր նախորդին վրա կբառնար:

Հոս լավ կըլլա անդրադառնալ պատահարի մը, որուն մասին ժամանակին ալ գրած և ահագին աղմուկի պատճառ եղած էմ, առանց ունէ շոշափելի արդյունք մը ձեռք բերելու:

1937-ին Երուաղեմ Շուեռացի հնավաճառն մը կզննի խիստ մեծարժեք և հայ դավանական տեսակետով եզակի ու ամենակարևոր Կիլիկիան ԺԳ դարու ձեռագիր մը: Սակայն նկատի առնելով ձեռագրին ինչ ինչ հանգամանքները կասկած ունեցա, թե մի գուցե վանքն գողցուած ըլլա: Զեռագիրը 1931-ին ալ ինծի ցույց տրված էր Երուաղեմ հայ հնավաճառն մը, որ 1937-ին մեռած էր արդեն: Այն ատեն ալ՝ կասկածիս պատճառով՝ չզննցի հատորը: Սակայն երբ տեսա, որ 1937-են դեռ այդ հատորը հրապարակին վրա է, որով գողցուած ըլլալու վախս մասամբ փարատեցավ, զննցի ձեռագիրը: Կատարելապէս ապահով ըլլալու համար սակայն ձեռագիրը վանք տարի և երջանկահիշատակ և սիրելի բարեկամներուն՝ Մեսրոպ Սրբազան Նշանյանի և Մկրտիչ Սրբազան Աղավնունիի ցույց տվի: Երկուքն ալ զմայլեցան ձեռագրին պարունակութեան, սակայն ապահովուցուցին զիս, որ վանքն չէր ձեռագիրը: Ծույց տվի նաև սիրելի բարեկամիս, այժմու պատրիարք Կյուրեղ Սրբազանին:

Բանի մը օր վերջ Կյուրեղ Սրբազանը հայտնեց, որ Թորգոմ Սրբազանը զիս տեսնել կուզէ: Ես շատ զբաղված ըլլալու և Թորգոմ Սրբազանը անձամբ ճանչցած ըլլալու իրեն չէի այցելած: Թորգոմ Սրբազանը խնդրել էր այդ նշանավոր ձեռագիրս ալ հետս տանիմ, որ ինքն ալ տեսնէ: Տարի և Սրբազանը ինքն ալ զմայլեցավ: Ինքն ալ բնավ չկասկածեցավ, որ վանքինն էր: Ինքն ալ խնդրեց, որ վանքին նվիրեմ: Պատասխանեցի, որ անկարելի է: Խոսակցութեան ատեն ուզեցինք գիտնալ թե վանքն ալ կամ այլու օրինակ մը կար այդ եզակի և ցարդ անյայտ մնացած գրութենէն: Զարդահանի մատենագրութեան գիմեցինք և գտանք, որ Սաղեմի վանքին մեջ այդ նութին մեկ օրինակը կհիշվի:

Յուցակներու դիմվեցավ և հետո մատենադարանին ու անկարելի եղավ գտնել Սաղեմի վանքին օրինակը: Սրբազանը առանց ունէ պատճառի պնդեց, որ ատիկա ըլլալու է «կորսված» օրինակը: Ես ալ իմ կարգիս պնդեցի, որ երբ վերջնականապես ապացուցվի, որ վանքինն է, ձեռագիրը այն ատեն վանքին կվերագրանամ, սակայն ոչ ատկե առաջ: Եվ ձեռագիրն ալ հետս մեկնեցա պանդոկ:

Ուշ գիշեր երկու վարդապետներ պանդոկ եկան: Ահագին աշխատութեամբ, որ միայն վանքին ձեռագրաց ցուցակագրութեան անկատար, անգործնական լլալը ցույց կուտա, կհաջողին վերջապես Խապայան կաթողիկոսի ցուցակին մեջ գտնել նկարագրութիւնը այս ձեռագրին: Յուցակը բերած էին իրենց հետ: Եվ արդարեւ իմ գնածս վանքին գողցված ձեռագիրն էր: Հաջորդաւորաբար նույն վարդապետներուն հետ ըստ մեր ժամագրութեան բարեկամի մը վաճառատան մեջ ձեռագիրը հանձնեցի և ինկաւագիրս ստացա: Նույն ատեն հայտնելով, որ եթե Թորգոմ պատրիարքը մինչև վեց ամիս հրապարակավ, կամ գոնէ ինծի անձնապես, չբացատրե վանքն այս ձեռագրին հեռացվելուն մանրամասնութիւնները, ես ստիպված պիտի ըլլայի հրապարակել: Ամիսներ անցան և ոչ մեկ ձայն: Ուստի ես հրապարակեցի: Արդյունքը նախատեսներու տարափ մը եղավ «Իրազեկ» ստորագրութեամբ, կամավորապես խեղաթուրվալ մանրամասնութիւններով: Կարծես թե ես չըլլայի կամավորապես ձեռագիրը վանք տանողը, և անոր սեփականութիւնը ըլլալուն համոզվելէս վերջ վանքին վերագրանողը: Բնավ խոսք չկար թե ի՞նչպես ձեռագիրը վաճառեմ մեկեւէր է, ի՞նչպես միաբանութեան ֆթին տակ 1931-են մինչև 1937 Երուաղեմ-

մի հեռավանդանոցում մոտ ծախու մեացի-
լ:

Սակայն ինչ որ ալ ավելի անհաշտելի էր, սա էր, որ իբր թե Թորգոմ Սրբազանին պատասխանատվությունը կվերանար, քանի որ գոյությունը կատարված էր ոչ թե իր պատրիարքության օրով, այլ հրջանկահիշատակ Դուրյան Սրբազանի օրով: Ծիշտ, ինչպես որ Արալանյան Սրբազան Ղալաթիո Ազգ. Մատենադարանի ձեռագիրներու գույ-ցրվիլը կընեն Նարոյան Սրբազանին վրա, անոր ժամանակ կատարված ըլլալով:

Ասոնք ապարդշուն արդարացումներ են: Ինծի հրեքե գոհացում չտրվեցաւ, թե ինչպես տարիներ կանցին և ձեռագրատան պարունակությունը գոնե տարին անգամ մը մայր ցուցակի վրա չի ստուգվիլ, գիտնալու համար թե ձեռագիրը հոն է դեռ, թե «կորսված»:

Ալ ավելի աշխատելի է սա պարագան, որ պատրիարքներ կմեռնին և անոնց հաջորդները իրենց ինկած իշխանության կարևորագույն մասը՝ հայ ձեռագիրները և եկեղեցական դանազան անոթներ ու հնութիւններ չեն ստուգվիլ, թե գոյություն ունին, որ գոյութուն ունեցած ըլլան ցուցակներու վրա:

Թորգոմ Սրբազանի և Արալանյան Սրբազանի հանցանքը իրենց նախորդներուն հանցանքին նվազ չէ:

Անիկա շատ պախարակելի, աշխատելի վիճակ մըն է, որ այլևս պետք է վերջ գտնա և իրարու հաջորդող իշխանություններ պետք է որ իրենց ստացած իշխանության ազգապատկան գանձերն ու հարստությունները պարտ ու պատշաճ համարատվութեամբ ստուգեն և անկե վերջ միայն ըստանան:

Իմ դիտողությանցս հենակետն ալ այդ էր, և միայն մեղավոր մարդիկ ատոր դեմ կրնային արտահայտվիլ, ինչպես որ եղաւ Սաղեմի տխուր խնդրին առթիւ: Միայն «Իրազեկ» կեղծանունին տակ ապաստանած մարդիկ կրնային խեղաթուրանքով, ցեխարձակմամբ հանրության ուշադրությունը հեռացնել իմ խնդրած «բարենորոգություններն»: Տարիներ վերջ միայն հավաստիացաւ, որ Սաղեմի վանքին ձեռագրաց իմ ուզած համարատվությունը կատարված է և ունէ ուրիշ ձեռագրի պակաս չէ նկատված: Չեմ գիտեր անկե վերջ ալ շարունակված է, գոնե տարին անգամ մը կատարվելիք այդ գնահատելի ստուգումը:

Ձեռագրաց գոյություն, որ դարձաւ հազարավոր տոլարներ արժողութեամբ ազգապատկան ձեռագրաց շուրջ կղանա, ուրիշ պատմություն մը:

Մեծ աղետն վերջ հրապարակաւ ըսվեցաւ և գրվեցաւ, որ Սեբաստիո Ս. Նշանի վանքին, ինչպես նաև Սեբաստիո շրջանին ձեռագիրները կարելի եղած է ստուգվելով Պոլիս ստացվիլ և անկե Երուսաղեմի մատենադարանը տարվիլ:

Սեբաստիո ձեռագրաց ցուցակը կազմված է Թորգոմ Սրբազանի Մեծ աղետն առաջ, և հետո մաս առ մաս հրատարակված «Հանդէս Ամսօրեայ»-ի թիվերուն մէջ:

Ուրեմն հոն գտնված ձեռագիրներուն մասին գրեթե լիակատար տեղեկություն ունեինք: Ասկե զատ Գարեգին Սրբազանն ալ տեսած է զանոնք Ս. Նշանի վանքը 1914-ին:

Արդ այդ ձեռագրաց ազգային հավաքածոյին ամենակարևոր քանի մը ձեռագիրներուն մասին տեղեկություններ ունիմ:

Սեբաստիո այդ գրադարանին ամենաթանկագին ավետարան մը գրված Կիլիկիա 1262-ին և մանրանկարչաւ Թորոս Ռոսլինե, տարիներ առաջ Փարիզի մէջ կգնե Տիգրան Բելեկյան ծանոթ հայ հնավաճառը: Հետո ձեռագիրը կվաճառե Պալտիմորի (Հյուս. Ամերիկա) Ուալթերը Արդ Կալըրիի, ուր և կգտնվի այժմ իբր այդ հավաքման թիվ 539:

Դարձաւ երկու երկաթագիր, մագաղաթյա ընտիր ավետարաններ, մին ժԲ դարեն, գործ մեր գեղեցկագույն գրիչներեն Կողմա գրչին, որոնք կգտնվեին դարձալ Սեբաստիո Ս. Նշանի հավաքածոյին մէջ, Երուսաղեմ՝ այժմ մեռած՝ հայ հնավաճառն մը ինծի ծախուեցան: Սեբաստիո ցուցակեն գիտնալով որ անոնք Սաղեմի վանքին չէին գուցուած, առանց այլ և այլի գնեցի, և այժմ հավաքմանս մաս կկազմեն:

Ուրիշ մեծարժեք ձեռագիր մը Սեբաստացի Բարադամ գրչին Միքայել որդիին գրված և 1914-ին Ենիսանի եկեղեցին գտնւիլով, ուր տեսած էր այդ ավետարանը Գարեգին Սրբազան, այժմ կգտնվի Ուաշինկգրնի Ֆրերեր Արդ Կալըրիի:

Արդ ինչպես կըլլա, ուր այս ընտիր ձեռագիրները այնքան խնամքով կգատվին Սեբաստիո ձեռագրաց հավաքման մէջն, և հոս ու հոն հրապարակ կհանվին: Չէ՞ որ Սեբաստիո ձեռագիրները եղածին պես սնտուկներով Սեբաստիային Պոլիս և անկե ալ Երուսաղեմ փոխադրված են: Ո՛ւր և

ե՛րբ այդ ձեռագիրները դատված են իրենց մայր հավաքածոյին և վաճառված: Ո՛վ է, որ կրցած է առիկա ընել: Անտարակույս ձեռագիրները ճանշող մըն է, որ ըրած է: Ասոնք հարցումներ են, որոնց կարելի չէ պատասխան գտնել գոնե առ այժմ:

Վերջին պատմություն մըն ալ ձեռագրաց գողություն անհատնում և վրդովիչ շարքեն:

2. Աճառչան 905—6-ին Թավրիզի Ս. Աստուածածին եկեղեցվո մեջ կհանդիպի արծաթակազմ, ընտիր և լավ վիճակի մեջ ավետարանի մը, որ նկարագրած է իր Թավրիզի ձեռագրաց ցուցակին մեջ: Այս մեծարժեք ավետարանը գրված է 1311-ին և մանրանկարված վարպետ հայ մանրանկարիչի մը, Թորոս Սարկավազի:

1924-ին Ֆրեստերիք Մաքլեր ի Փարիզ կը հրատարակէր Տոբոման տԱրդ Արմենիեն, ուր կենդակացներ վեց բոլորէջյան ընտիր մանրանկարներ: Ասոնցմէ չորս հատը նըշանակված էին իբր Ռոգենպերկի հավաքածոյին: Այս չորս մանրանկարները (երկու թերթ) այժմ կգտնվին Նյու-Յորքի պալատական Հազարյան բարեկամիս գեղարվեստական հավաքածոյին մեջ: Երկու մանրանկար ալ Մաքլերի հրատարակության մեջ նշանակված են «Նախկին Խաչիկ Սվաճյան հավաքածոյին», որոնց այժմ ուր ըլլալուն մասին տեղեկություն չունիմ:

1943-ին Նյու-Յորք պարսկաստանցի հրեա վաճառականն մը ինծի ցույց տրվեցան Մարկոսի և Ղուկասի բոլորէջյան մանրանկարները, որոնցմէ միայն Ղուկասը գնեցի իր հիշատակարանին համար: Հետո նույն հրեային գնեցի ԺԲ դարյան խիստ կարևոր թղթյա ավետարան մը հունական մանրանկարներով և հիշատակարաններով, մեծահամբավ Կոզմա գրչին գրյալ: Ասիկա որքան որ գիտեմ հնագույն թղթյա հայերեն ավետարանն է մեր մոտ: (Թղթյա ձեռագիրներ, ոչ ավետարան, Ժ դարեն կան էջ միածին նախկին հավաքման մեջ): Այս ավետարանին մեջ էր նաև ուրիշ ձեռագրեր մը փրցված էջ մը, սկիզբն Մարկոսի ավետարանին գունագեղ խորանով և սկզբնատառերով: Ասոնքն վերջ Ռապիեդ Կարբեդ մեծահարուստ ամերիկացիին հավաքածոյին մեջ հանդիպեցա Մաթեոսի մանրանկարին: Բոլոր այս մանրանկարները և Մարկոսի սկիզբը հանված էին 2. Աճառչանի նկարագրած և 1906-ին Թավրիզի Ս. Աստուածածին եկեղեցիին մեջ գտնվող արծաթակազմ, լավ վիճակի մեջ եղող ընտիր և մեծարժեք

ավետարանն, գրված և մանրանկարված 1311-ին:

Կարբեզի հավաքման Մաթեոսի, և իմ հավաքման Ղուկասի մանրանկարներուն և առնոց ձեռագրի մասին նկարագրող ուսումնասիրություն մը հրատարակեցի անգլերեն Բրինսդընի համալսարանի Գրոնիքը եռամսյային հունիսի 1943. թվին մեջ:

Արդ ի՞նչպես կըլլա, որ Թավրիզի Ս. Աստուածածին պատկանող ձեռագիր մը, որ կերևա իր արծաթ կազմով մասնավոր հարգանք պիտի վայելեր, 1906—1924-ի միջև ատեն մը եկեղեցիին կողցվի, կտոր-կտոր կըլլա և էջ-էջ Փարիզն միշտ և մերիկա կծախվի: Բուն ձեռագիրը իր ամբողջությամբ, նաև արծաթե կազմը, որ կարևոր կազմ մըն էր, այժմ բոլորովին աներևոյթ կմնա:

Այսպես, զոյաբոյն ունեցող եկեղեցի մը օր ցերեկով կողցվի կարևոր և մեծագին ձեռագիր մը և ատոր համար ոչ մեկ խոսք կըլլա:

Իրապես սահմեկեցուցիչ վիճակ մը: Քանի մը սենթի համար իրարմե հաշիվ կպահանջենք, նույնիսկ իրարու գուլիս պայթեցնելու կելլենք: Ազգային իշխանություններ, հաստատություններ երկար բարակ հաշիվ կուտան նույնիսկ ծախսված նամակադրոշմներու համար. սակայն ազգային իշխանություններ, թաղականություններ, հոգաբարձություններ, պատրիարքներ կուգան ու կերթան, առանց եկեղեցական իրերու, հնությանց, ձեռագրաց և այլնի մասին հարեանցի ակնարկ մը նետելու, ուր մնաց ստուգելու: Նվ սակայն այդ մոռացված, «անգիտաց անոյեռ» իրերը ավելի արժեքավոր են, և ավելի կարևոր, որքան այն շատ մը դրամական գումարները, որոնց համար դրամ, ժամանակ և կարողություն կսպառեն հանրության ցույց տալու համար, որ ասոնք անխաբիա կկիրարկվին:

Մեծ Աղետին ասեն, երբ Ֆիլիպ էի, ահագին աշխատությամբ մոռցված ծակերու մեջ կամ անպետ դեզերու տակն նետված ձեռագիրներ գտա. մաքրեցի խնամքով և այժմ՝ որքան որ գիտեմ՝ խնամով կպահվին անոնք Ֆիլիպին եկեղեցին կամ առաջնորդարանը: Իրավ է, մեծարժեք բաներ չէին անոնք. սակայն դադուրին լավագույն հարստություններն էին:

Այսպես ամեն կողմ ես կրնամ ցույց տալ հայ ձեռագիրներ փչացման, անապահովության, ենթակա, այս ու այն տարակուսելի պատճառներով ծակերու, ծերպերու, խոռոչներու մեջ թխմված, զուրկ կանոնա-

վոր և դիտական խնամքի, ենթակա ցեցի, խոնավության և նամանավաճի գողության կամ այլ տեսակ փչացումի: Մինչ նույնիսկ տարրական պարբերական ստուգություն մը, համարատվություն մը չի կատարվիր անոնց համար: Անոնց ցուցակները չհրատարակված կմնան: Իզուր չէ որ մեր նախնիք «գիրք փակյալ կուռք են» վճռած են:

Թող քինախնդրություն, թող նախաձեռնող ինչ որ կազմի վերագրվի ինձի, սակայն ի սեր Աստուծո, քանի բոլորովին ուշ չէ, ստուգումի ենթարկենք մեր մշակութային ժառանգությունը, խնամք տանինք անոնց, փրկենք զանոնք կորուստի: Շատ բան չմնաց այն ահարկու հարվածեն վերջ, որ այնքան խնամքով մեզի տվին թուրքերը. չի նիզակեցինք անոնց և անոնց բոլորովին գլուխ չի հանած գործը մենք մեր անտարբերությամբ մեղսակցյալ կատարյալ շրջանը:

Իրավ է շունինք պատրաստված ուժեր բուր ատոնցմե. օգտվելու, սակայն պատրաստության պետք չկա այդ ձեռագրերը և այլ իրերը ըմբռնելի, գոնե ձեռքի ցուցակներու մեջ արձանագրելու, ժամանակը անդամ մը անոնց գոյություն ունենալը այդ ցուցակներով վերստուգելու, զանոնք խոնավ տեղ չդնելու, ցեցի, մպլոտելի փրկելու, փոշիները սրբելու, նկարազարդ թերթերու մեջ բարակ և կակուղ պաշտպանիչ թուղթեր դնելու և այլն:

Եթի ոչ ամեն տեղ, գոնե եթե տեղ մը կատարվի այս խնդրանքներս, անտարակույս թե «Պայքար», որ հյուրընկալն է այս յոշերուն, և թե ես մեր վարձքն ստացած կըլլանք:

(«Պայքար» հունվար 15 և 16 1946 թ. Բոստոն)



Հոռոմոսի վանքի (Ղոշավաճ) մեծ
ժամատան ներքին տեսքը (ԺԳ դար)